Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«30» 12 2023 թ. № 4 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի « 15 » 01 2024 թ.
N 1-24 նիստում, խորհրդի նախագահ՝ _____ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն փաստաթղթով սահմանվում է <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականությունը և ներգրավվածության ապահովման մեխանիզմները:

2. ՔՈԼԵՋԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԸ

2.1. Քոլեջի «շահակից» է համարվում այն անձը (անձինք) կամ կառույցը, ով իր գործունեությամբ անմիջականորեն ազդում է քոլեջի գործունեության վրա կամ կրում է քոլեջի գործունեության ազդեցությունը: Այդ տեսակետից մենք առանձնացնում ենք քոլեջի հիմնական շահակիցների երկու խումբ՝

- Ներքին շահակիցներ (ուսանողներ, դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմեր),
- Արտաքին շահակիցներ (շրջանավարտներ, աշխատաշուկայի ներկայացուցիչներ (գործատուներ), դիմորդներ, ծնողներ, ոլորտի պետական և մասնագիտական կառույցներ (համագործակցող քոլեջներ և կազմակերպություններ, պետական կառավարման մարմիններ, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն) և այլն):

3. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Որակի ապահովման գործընթացներում քոլեջի շահակիցների ներգրավվածության մեխանիզմները կարող են լինել՝

3.1. ընդգրկվածությունը քոլեջի կառավարման տարբեր մակարդակի խորհուրդներում և այլ կառույցներում՝ որպես այդ մարմինների լիարժեք անդամներ,

3.2. աշխատանքը քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնում՝ որպես շահակիցների ներկայացուցիչներ,

3.3. մասնակցությունը որակի ներքին ապահովման գործընթացների հետ կապված աշխատանքներին,

3.4. մասնակցությունը քոլեջում կազմակերպվող տարատեսակ հարցումներին՝ որպես հարցվողներ, ինչպես նաև դրանց կազմակերպման և իրականացման աշխատանքներին,

3.5. մասնակցությունը մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և վերանայման գործընթացներին,

3.6. ընդգրկվածությունը ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծություն իրականացնող աշխատանքային խմբերում,

3.7. մասնակցությունը անհատական դեմառդեմ կամ հեռախոսային հարցազրույցներին և հարցումներին, ինչպես նաև էլեկտրոնային փոստով կամ կայքերով հաղորդակցմանը:

4. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավվածության նպատակն է՝

4.1. ապահովել որակի ապահովման գործընթացների մասնակցային բնույթը,

4.2. ապահովել բոլոր շահակիցների համար համաձայնեցված մոտեցում որակի ապահովման գործընթացների և դրանց արդյունքների կիրառության վերաբերյալ,

4.3. նպաստել կառավարման գործընթացներում շահակիցների արդյունավետ համագործակցությանը և որոշումների թափանցիկ կայացմանը,

4.4. նպաստել որակի մշակույթի ձևավորման մեջ տարբեր շահակիցների ներդրումներին,

4.5. քոլեջում ձևավորել մթնոլորտ, երբ բոլոր շահակիցներն են պատասխանատվություն կրում արդյունքների որակի համար:

5. ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Ուսանողների ներգրավվածությունը պետք է ապահովել՝

5.1.1. քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնում՝ խորհրդում ձայնի իրավունքով,

5.1.2. իրենց կարիքների վերհանման գործընթացում որպես որակի ապահովման գործընթացների շահակիցների ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ) ներկայացուցիչներ,

5.1.3. կրթական ծրագրերի բովանդակության, ուսուցման մեթոդաբանության և ուսումնական գործընթացի կազմակերպման գնահատման գործընթացներում,

5.1.4. դասախոսական կազմի դասավանդման որակի և վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացներում,

5.1.5. քոլեջի կողմից առաջարկվող ծառայությունների և ուսումնառության ռեսուրսների գնահատման գործընթացներում,

5.1.6. քոլեջի ուսումնական միջավայրի գնահատման գործընթացներում:

5.2. Դասախոսական կազմի ներգրավվածությունը պետք է ապահովել՝

5.2.1. քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնում՝ խորհրդում ձայնի իրավունքով,

5.2.2. ուսումնական գործընթացին առնչվող խորհուրդներում,

5.2.3. մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման, վերանայման և բարելավման գործընթացներում,

5.2.4. առարկայական դասընթացների ծրագրերի մշակման, վերանայման և բարելավման գործընթացներում,

5.2.5. փոխադարձ դասալսումների իրականացման և վերլուծության գործընթացներում,

5.2.6. ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծության գործընթացներում,

5.2.7. քոլեջի կրթական գործունեության գնահատման և իրենց կարիքների վերհանման գործընթացում,

5.2.8. աշխատանքային միջավայրի գնահատման գործընթացներում,

5.2.9. քոլեջի ռեսուրսների գնահատման գործընթացում:

5 ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Շրջանավարտների ներգրավվածությունը պետք է ապահովել՝

6.1.1. կրթական ծրագրերի բովանդակության, ուսուցման մեթոդաբանության և ուսումնական գործընթացի կազմակերպման գնահատման գործընթացներում,

6.1.2. դասախոսական կազմի դասավանդման որակի և վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացներում,

6.1.3. քոլեջի կողմից առաջարկվող ծառայությունների և ուսումնառության ռեսուրսների գնահատման գործընթացներում,

6.1.4. քոլեջի ուսումնական միջավայրի գնահատման գործընթացներում:

6.2. Գործատուների ներգրավվածությունը պետք է ապահովել՝

6.2.1. քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնում՝ խորհրդում ձայնի իրավունքով,

6.2.2. մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման, գնահատման և վերանայման գործընթացներում,

6.2.3. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և ավարտական քննությունների անցկացման և գնահատման գործընթացներում,

6.2.4. արտադրական պրակտիկայի արդյունքների ամփոփման և գնահատման գործընթացներում,

6.2.5. քոլեջի որակի ապահովման այլ գործընթացներում:

6.3. Արտաքին գնահատողների (փորձագետների) ներգրավվածությունը պետք է ապահովել՝

6.3.1. ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության գործընթացներում,

6.3.2. քոլեջի որակի ապահովման այլ գործընթացներում: